ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 131

ք. Երևան 25.07. 2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-24-8/3» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ԿԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 01335546, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նազարբեկյան թղմ., շ. 1 Ա, բն. 13 (այսուհետ՝ նաև Մասնակից)): Մասնակցի կողմից ներկայացրած հայտի հավելված 1-ի առաջին կետում նշված է, որ ««ԿԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձիք բավարարում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-24-8/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին..»: Սակայն ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից (այսուհետ՝ նաև Ծառայություն) 24.06.2024թ. ստացվել է թիվ Ե/1526-24 գրություն, համաձայն որի Ծառայությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Զաքարյան Շին» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 01329251) 2023թ. սեպտեմբերի 8-ից մինչև 2025թ. սեպտեմբերի 8-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և որ «ԿԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Սամվել Աշոտի Զաքարյանի և «Զաքարյան Շին» ՍՊԸ միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ «ԿԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Սամվել Աշոտի Զաքարյանը 2022թ. հոկտեմբերի 14-ից մինչև օրս հանդիսանում է նաև «Զաքարյան Շին» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասի բաժնետեր և տնօրեն:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 22.07.2024թ. N 03/26-1/15366-2024 գրությունը, որոշում եմ՝ «ԿԱՐՄԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ